ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-21-4/1-1

ք. Երևան 29 .03.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Արպանիվ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Խանդանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 442 864 506 (չորս հարյուր քառասուներկու միլիոն ութ հարյուր վաթսունչորս հազար հինգ հարյուր վեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և սակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակներին (ամիսներին): Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը

---

[22] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Արպանիվ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ.ք. Երևան, Նար-Դոսի 122,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2050022326481001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 09209297
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	Ա. ԽԱՆԴԱՆՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-4/1-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Անվանումը	Առաջարկվող ապրանքի				
		ֆիրմային անվանումը	Ապրանքային նշանը	մակնիշը	Արտադրողի անվանումը	Տեխնիկական բնութագրերը
1	Ավտոմեքենաների անիվներ Անվադող 225/75R16	GOOD YEAR	Wrangler All-Terrain Adventure	225/75R16	GOOD YEAR	Անվադող 225/75R16: Չափման մ/վ՝ հատ: Նշանակությունը՝ ամառային, ներքին կառուցվածքը-կեվլարից (KEVLAR, DuPont.TM),ՈՒԱՋ, ՏՈՅՈՏԱ-ՀԻԼՅՈՒՔՍ մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար անվախուցով: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ T(190): Անվադողի բեռնվածության ինդեքսը՝108: Անվադողի բեռնվածությունը /կգ՝1000: Անվադողի արտադրության տարեթիվը սկսած 2020թ-ից: Անվադողերը նոր են, չօգտագործված:
2	Ավտոմեքենաների անիվներ Անվադող 8,25R20	ОМСКШИНА	Y-2	8,25R20	ОМСКШИНА	Անվադող 8,25R20: Չափման մ/վ՝ հատ: Նշանակությունը՝ պահպանաշերտի գծանկարը-ունիվերսալ, դողի կառուցվածքը՝ ռադիալ, ԳԱԶ-53,ՊԱԶ մակնիշի ԱՏ-ների կամ համարժեք այլ տեխնիկայի համար անվախուցով և անվադողի ժապավենով: Անվադողի անվանումը, պահպանաշերտի մոդելը՝ Y-2: Անվադողի շերտայնությունը՝ PR10: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ J(100): Անվադողի բեռնվածության ինդեքսը՝125/122: Անվադողի բեռնվածությունը /կգ՝1650/1500: Անվադողի արտադրության տարեթիվը սկսած 2020թ-ից: Անվադողերը նոր են, չօգտագործված:
3	Ավտոմեքենաների անիվներ Անվադող 12.00-20	ОМСКШИНА	М-93	12.00-20	ОМСКШИНА	Անվադող 12.00-20: Չափման մ/վ՝ հատ: Նշանակությունը՝ պահպանաշերտի գծանկարը-բարձր անցողության, դողի կառուցվածքը՝դիագոնալ, ԶԻԼ-131, 137 մակնիշի ԱՏ-ների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար անվախուցով և անվադողի ժապավենով: Անվադողի անվանումը, պահպանաշերտի մոդելը՝ М- 93: Անվադողի շերտայնությունը՝ PR8:Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ J(100): Անվադողի բեռնվածության ինդեքսը՝135: Անվադողի բեռնվածությունը /կգ՝2180: Անվադողի արտադրության տարեթիվը սկսած 2020թ-ից: Անվադողերը նոր են, չօգտագործված:
4	Ավտոմեքենաների անիվներ Անվադող 1220x400-533	ОМСКШИНА	И-П 184	1220x400-533	ОМСКШИНА	Անվադող 1220x400-533: Չափման մ/վ՝ հատ: Նշանակությունը՝ պահպանաշերտի գծանկարը-բարձր անցողության, դողի կառուցվածքը՝դիագոնալ, ԿամԱԶ-4310, 43105 և այլն մակնիշի ԱՏ-ների համար անվախուցով և անվադողի ժապավենով: Անվադողի անվանումը, պահպանաշերտի մոդելը՝ И-П184: Անվադողի շերտայնությունը՝ PR10:Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ G(90): Անվադողի բեռնվածության ինդեքսը՝142: Անվադողի բեռնվածությունը /կգ՝2650: Անվադողի արտադրության տարեթիվը սկսած 2020թ-ից: Անվադողերը նոր են, չօգտագործված:

5	Ավտոմեքենաների անիվներ Անվադող 500/70-508 (1200x500-508)	ОМСКШИНА	ИД-П284	500/70-508 (1200x500-508)	ОМСКШИНА	Անվադող 500/70-508 (1200x500-508): Չափման մ/վ՝ հատ: նշանակությունը՝ պահպանաշերտի գծանկարը-բարձր անցողության, դողի կառուցվածքը՝ դիագոնալ, ՈՒրալ մակնիշի ԱՏ-ների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար անվախուցով և անվադողի ժապավենով: Անվադողի անվանումը, պահպանաշերտի մոդելը՝ ИД-П284: Անվադողի շերտայնությունը՝ PR16: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ F(80): Անվադողի բեռնվածության ինդեքսը՝156: Անվադողի բեռնվածությունը /կգ՝4000: Անվադողի արտադրության տարեթիվը սկսած 2020թ-ից: Անվադողերը նոր են, չօգտագործված:
6	Ավտոմեքենաների անիվներ Անվադող 12.00R20	ROADMAX	ST928	12.00R20	ROADMAX	Անվադող 12.00R20: Չափման մ/վ՝ հատ: նշանակությունը՝ պահպանաշերտի գծանկարը-ունիվերսալ, կառուցվածքը-ԱՄԿ, all steel, radial steel (ամբողջական մետաղական կառուցվածքով), Հինո 700 կիսակցորդի կամ համարժեք այլ տեխնիկայի համար անվախուցով և անվադողի ժապավենով: Անվադողի շերտայնությունը՝ PR18: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ L(120): Անվադողի բեռնվածության ինդեքսը՝154/151: Անվադողի բեռնվածությունը /կգ՝3750/3450: Անվադողի արտադրության տարեթիվը սկսած 2020թ-ից: Անվադողերը նոր են, չօգտագործված:
7	Ավտոմեքենաների անիվներ Անվադող 12.00R24	ROADMAX	ST959	12.00R24	ROADMAX	Անվադող 12.00R24: Չափման մ/վ՝ հատ: նշանակությունը՝ պահպանաշերտի գծանկարը-ունիվերսալ, կառուցվածքը-ԱՄԿ, all steel, radial steel (ամբողջական մետաղական կառուցվածքով), ՀԻՆՈ-700 քարշակի համար անվախուցով և անվադողի ժապավենով: Անվադողի շերտայնությունը՝ PR20: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ K(110): Անվադողի բեռնվածության ինդեքսը՝160/157: Անվադողի բեռնվածությունը /կգ՝4500/4125: Անվադողի արտադրության տարեթիվը սկսած 2020թ-ից: Անվադողերը նոր են, չօգտագործված:
8	Ավտոմեքենաների անիվներ Անվադող 1300x530-533	ОМСКШИНА	ВИ-3	1300x530-533	ОМСКШИНА	Անվադող 1300x530-533: Չափման մ/վ՝ հատ: նշանակությունը՝ պահպանաշերտի գծանկարը-բարձր անցողության, դողի կառուցվածքը՝դիագոնալ, ԿՈՒՐ մակնիշի ԱՏ-ների համար անվախուցով և անվադողի ժապավենով: Անվադողի անվանումը, պահպանաշերտի մոդելը՝"ВИ-3": Անվադողի շերտայնությունը՝ PR16: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ B(50): Անվադողի բեռնվածության ինդեքսը՝173: Անվադողի բեռնվածությունը /կգ՝6500: Անվադողի արտադրության տարեթիվը սկսած 2020թ ից: Անվադողերը նոր են, չօգտագործված:
9	Ավտոմեքենաների անիվներ Անվադող 11.00R20	ОМСКШИНА	И-111АМ	11.00R20	ОМСКШИНА	Անվադող 11.00R20: Չափման մ/վ՝ հատ: նշանակությունը՝ պահպանաշերտի գծանկարը-ճանապարհային,դողի կառուցվածքը՝ ռադիալ ԿԱՄԱԶ, ՄԱԶ կամ համարժեք այլ ԱՏ-ների համար անվախուցով և անվադողի ժապավենով: Անվադողի անվանումը, պահպանաշերտի մոդելը՝"И-111АМ": Անվադողի շերտայնությունը՝ PR16: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝

						K(110): Անվադողի բեռնվածության ինդեքսը՝150/146: Անվադողի բեռնվածությունը /կգ՝3350/3000: Անվադողի արտադրության տարեթիվը սկսած 2020թ-ից: Անվադողերը նոր են, չօգտագործված:
10	Ավտոմեքենաների անիվներ Անվադող 12.00R20	ОМСКШИНА	ИД-304М, У-4	12.00R20	ОМСКШИНА	Անվադող 12.00R20: Չափման մ/վ՝ հատ: Նշանակությունը՝ պահպանաշերտի գծանկարը-ունիվերսալ,դողի կառուցվածքը՝ ռադիալ, ՄԱՋ,, Դ-1, Դ-20, ԿՍ-19 հատուկ տեխնիկայի համար կամ համարժեք այլ ԱՏ-ների համար անվախուցով և անվադողի ժապավենով: Անվադողի անվանումը, պահպանաշերտի մոդելը՝ ИД-304М У-4,: Անվադողի շերտայնությունը՝ PR18: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ J(100): Անվադողի բեռնվածության ինդեքսը՝154/149: Անվադողի բեռնվածությունը /կգ՝3750/3250: Անվադողի արտադրության տարեթիվը սկսած 2020թ-ից: Անվադողերը նոր են, չօգտագործված:
11	Ավտոմեքենաների անիվներ Անվադող 12.00-18	ОМСКШИНА	К-70	12.00-18	ОМСКШИНА	Անվադող 12.00-18: Չափման մ/վ՝ հատ: Նշանակությունը՝ պահպանաշերտը գծանկարը բարձր անցողության ,դողի կառուցվածքը՝ դիագոնալ, ԳԱԶ-66, 3308 մակնիշի ԱՏ-ների համար անվախուցով և անվադողի ժապավենով: Անվադողի անվանումը, պահպանաշերտի մոդելը՝"К-70": Անվադողի շերտայնությունը՝ PR8: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ J(100): Անվադողի բեռնվածության ինդեքսը՝129: Անվադողի բեռնվածությունը /կգ՝1850: Անվադողի արտադրության տարեթիվը սկսած 2020թ-ից: Անվադողերը նոր են, չօգտագործված:
12	Կուտակիչ մարտկոցներ Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-60	"ISTA-CENTR"/"DOZ" Energoavtomatika	Feon	6US-60	"ISTA-CENTR" "DOZ" Energoavtomatika	Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-60: Նոմինալ ունակությունը /Ա/ժ (թույլատրելի շեղումը +/- (1-5%)՝60: Լարումը/Վ՝12: Լիցքաթափման հոսանքը -18 0C-ի դեպքում /Ա՝ EN480: Սեղմակները ըստ ստանդարտի՝ կոնաձև: Բևեռականությունը՝ 1;0: Երկարությունը՝242: Լայնությունը՝175: Բաձրությունը՝190: Բռնակի ձևը՝1P կամ 2P: Կափարիչի ձևը՝ Միաձույլ: Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը/կգ՝2.1:Արտադրության տարեթիվը սկսած 2021-ից
13	Կուտակիչ մարտկոցներ Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-90	"ISTA-CENTR"/"DOZ" Energoavtomatika	Feon	6US-90	"ISTA-CENTR" "DOZ" Energoavtomatika	Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-90: Նոմինալ ունակությունը /Ա/ժ (թույլատրելի շեղումը +/- (1-5%)՝90: Լարումը/Վ՝12: Լիցքաթափման հոսանքը -18 0C-ի դեպքում /Ա՝ EN720: Սեղմակները ըստ ստանդարտի՝ կոնաձև: Բևեռականությունը՝ 1;0: Երկարությունը՝353: Լայնությունը՝175: Բաձրությունը՝190: Բռնակի ձևը՝1P կամ 2P: Կափարիչի ձևը՝ Միաձույլ: Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը/կգ՝3.2: Արտադրության տարեթիվը սկսած 2021-ից
14	Կուտակիչ մարտկոցներ Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-140	"ISTA-CENTR"/"DOZ" Energoavtomatika	Feon	6US-140	"ISTA-CENTR" "DOZ" Energoavtomatika	Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-140: Նոմինալ ունակությունը /Ա/ժ (թույլատրելի շեղումը +/- (1-5%)՝140: Լարումը/Վ՝12: Լիցքաթափման հոսանքը -18 0C-ի դեպքում /Ա՝ EN900: Սեղմակները ըստ ստանդարտի՝ կոնաձև: Բևեռականությունը՝3;4: Երկարությունը՝513: Լայնությունը՝189: Բաձրությունը՝220: Բռնակի ձևը՝2W կամ 2P Կափարիչի ձևը՝ Միաձույլ: Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի

						համար նախատեսված ծծմբական թթվի քանակը/կգ՝6: Արտադրության տարեթիվը սկսած 2021-ից

Ծանոթություն՝ Անվադողերի համար

1. Անվադողերը ըստ տեխնիկական բնութագրի պետք է համալրված լինեն անվախուցով ,անվադողի ժապավենով և անվախուցի փականով:
2. Այնանվադողերը, որոնց տեխնիկական բնութագրերով նշված է <<ամառային>>, անվադողի վրա պետք է նշված լինեն՝ <<M+S կամ all season>>, իսկ<<ձմեռային>>՝ անվադողերի դեպքում<<*>> (ձյան փաթիլի նախշանկար):
3. Անվադողի արտադրության տարեթիվը սկսած 2020թ-ից:
4. մատակարարման (ընդունման) ժամանակ ներկայացնել մուտքագրվող անվադողի համապատասխանության վերաբերյալ սերտեֆիկատը:
5. Անվադողերի երաշխիքային ժամկետը ապրանքը ընդունելու օրվանից հաշված 1 տարի կամ 5000կմ վազք աշխատատևողությամբ:
6.Մատակարարված անվադողերի ժամանակից շուտ շարքից դուրս գալու դեպքում, բողոքարկման (ռեկլամացիոն) աշխատանքները կազմակերպել ՀՀ ՋՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության (գորամասի, ստորաբաժանման) և մատակարար կազմակերպության մասնագետների անմիջական մասնակցությամբ, արտադրական խոտանի դեպքում վերականգնումը մատակարարող կազմակերպության կողմից նմանատիպ ապրանքով՝ նախապես հաշվի առնելով ժամանակից շուտ շարքից դուրս գալու պատճառները, մնացած դեպքերում ըստ ուսումնասիրությունների արդյունքների:
7. Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:
8. Ապրանքները պետք է հանձնվեն Կոտայքի մարզ, ք.Եղվարդ, Եղվարդի խճ. ՀՀ ՊՆ 84029 զորամաս:

Ծանոթություն Մարտկոցների համար

1. Կուտակիչ մարտկոցները ըստ տեսակների մատակարարել չոր չլիցքավորված վիճակում, արտադրության տարեթիվը սկսած 2021-ից: Ընթացիկան հրաժեշտությունից ելնելով, համապատասխան քանակի (պայմանագրով նախատեսված քանակից ոչ ավելի) և տեսակի չոր չլիցքավորված կուտակիչ մարտկոցները մատակարար ընկերության կողմից լիցքավորել և սպասարկել կամ մատակարարել լիցքավորված վիճակում՝ ըստ պատվիրատուի պահանջի (ըստ պայմանավորվածության): Լիցքավորված կուտակիչ մարտկոցների մատակարարման դեպքում տվյալ քանակի մասով ծծմբական թթու չի պահանջվում:
2. Չոր չլիցքավորված կուտակիչ մարտկոցների (յուրաքանչյուր կուտակիչ մարտկոցի համարը ստվերը նշված քանակի) համապատասխան քանակի ծծմբական թթուն (1,23 խտության) մատակարարել տարրաներով՝ ըստընդհանուր մատակարարվող համապատասխան քանակների:
3. Ըստ մատակարարի նախապես ներկայացված պահանջի, դատարկ տարաները խմբաքանակներով հետ կվերադարձվեն՝ համապատասխան քանակի ծծմբական թթուն օգտագործելուց հետո:
4. Կուտակիչ մարտկոցների համար անհրաժեշտ երաշխիքային պայմանները:
4.1 Սահմանված կարգով պայմանների պահպանման դեպքում՝ չոր չլիցքավորված կուտակիչ մարտկոցների երաշխիքային պահպանման ժամկետը պետք է լինի 5 տարի, աշխատանքային վիճակի բերված կուտակիչ մարտկոցների երաշխիքային շահագործման ժամկետը պետք է լինի 2 տարի, ժամկետը սկսվում է էլեկտրալուծույթը մարտկոցների մեջ լցնելու պահից, որոնց հաշվառումը տարվում է ՀՀ ՋՈՒ համապատասխան զորամասերում:
4.2 Մատակարարման ենթակա, աշխատանքային վիճակի բերված կուտակիչ մարտկոցները պետք է ունենան նվազագույնը 4 տարի կամ 75000 կմ վազք շահագործման աշխատատևողության ժամկետ(հատուկ նշանակության ավտոմեքենաների կուտակիչ մարտկոցների աշխատատևողության նորմերը նվազեցվում են 15%-ով):
5. Բողոքարկման (ռեկլամացիոն) աշխատանքները կազմակերպել ՀՀ ՋՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության (գորամասի, ստորաբաժանման) և վաճառող կազմակերպության անմիջական մասնակցությամբ, այդ թվում ներառյալ վերականգնում կամ վերականգնում նմանատիպ առարկայով (երաշխիքով)՝ հաշվի առնելով անսարքության պատճառները:
6. Յուրաքանչյուր կուտակիչ մարտկոցի հետ առկա լինի հայերեն լեզվով տեխնիկական անձնագիրը, որի մեջ մատչելի կերպով արտացոլված լինի կուտակիչ մարտկոցի լիցքավորման կարգը, տեխնիկական պարամետրերը, սպասարկման կարգը՝ մշտապես և ոչ մշտապես օգտագործման դեպքում, չոր լիցքավորված, չոր չլիցքավորված և լիցքավորված կուտակիչ մարտկոցների երկարատև ու կարճատև պահպանման կարգը, էլեկտրալուծույթի ծավալի նվազեցման դեպքում ծավալի վերականգնման կարգը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:
7. մատակարարման (ընդունման) ժամանակ ներկայացնել մուտքագրվող կուտակիչ մարտկոցի արտադրողի համապատասխանության վերաբերյալ սերտեֆիկատը , որտեղ արտացոլվի որակը հավաստող ու տեխնիկական բնութագրով նախատեսված տեխնիկական ցուցանիշները:

8. Կուտակիչ մարտկոցները պետք է լինեն չօգտագործված:
9. Ապրանքները պետք է հանձնվեն Կոտայքի մարզ, ք.Եղվարդ, Եղվարդի խճ. ՀՀ ՊՆ 84029 զորամաս:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանումը	Հ/Մ	Ընդհանուր քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գինը (ՀՀ դրամ)	Ապրանքի մատակարարումը 2021թ. ըստ եռամսյակների	
						2-րդ	3-րդ
1	Ավտոմեքենաների անիվներ	հատ	700	74798	52358600	450	250
2	Ավտոմեքենաների անիվներ	հատ	300	46338	13901400	200	100
3	Ավտոմեքենաների անիվներ	հատ	300	164338	49301400	200	100
4	Ավտոմեքենաների անիվներ	հատ	300	134338	40301400	200	100
5	Ավտոմեքենաների անիվներ	հատ	180	158338	28500840	180	
6	Ավտոմեքենաների անիվներ	հատ	450	137338	61802100	250	200
7	Ավտոմեքենաների անիվներ	հատ	300	145338	43601400	200	100
8	Ավտոմեքենաների անիվներ	հատ	48	254338	12208224	48	
9	Ավտոմեքենաների անիվներ	հատ	140	84338	11807320	140	
10	Ավտոմեքենաների անիվներ	հատ	460	107338	49375480	260	200
11	Ավտոմեքենաների անիվներ	հատ	300	163338	49001400	200	100
12	Կուտակիչ մարտկոցներ	հատ	409	18338	7500242	205	204
13	Կուտակիչ մարտկոցներ	հատ	450	29638	13337100	225	225
14	Կուտակիչ մարտկոցներ	հատ	200	49338	9867600	100	100

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Արպանիվ» ՍՊԸ տնօրեն

Ա. ԽԱՆԴԱՆՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-4/1-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի			Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ, ընդ որում՝		
չ/h	անվանումը	CPV կոդը	2-րդ	3-րդ	4-րդ
1	Ավտոմեքենաների անիվներ	34351200/9	6283032	52358600	52358600
2	Ավտոմեքենաների անիվներ	34351200/50	4587462	13901400	13901400
3	Ավտոմեքենաների անիվներ	34351200/53	9860280	49301400	49301400
4	Ավտոմեքենաների անիվներ	34351200/54	13299462	40301400	40301400
5	Ավտոմեքենաների անիվներ	34351200/57	14250420	28500840	28500840
6	Ավտոմեքենաների անիվներ	34351200/58	16686567	61802100	61802100
7	Ավտոմեքենաների անիվներ	34351200/61	14388462	43601400	43601400
8	Ավտոմեքենաների անիվներ	34351200/68	6104112	12208224	12208224
9	Ավտոմեքենաների անիվներ	34351200/62	5903660	11807320	11807320
10	Ավտոմեքենաների անիվներ	34351200/67	13825134.4	49375480	49375480
11	Ավտոմեքենաների անիվներ	34351200/49	16170462	49001400	49001400
12	Կուտակիչ մարտկոցներ	31442100/2	3750121	7500242	7500242
13	Կուտակիչ մարտկոցներ	31442100/7	6668550	13337100	13337100
14	Կուտակիչ մարտկոցներ	31442100/12	4933800	9867600	9867600

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ՝
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Արպանիվ» ՍՊԸ տնօրեն

Ա. ԽԱՆԴԱՆՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-21-4/1-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-21-4/1-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____ __-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն